

Հաստատում եմ՝ 15 մայիսի 2026թ.

Հայ-Ռուսական համալսարանի

գիտական գծով պրոռեկտոր,

փիլիսոփայական գիտությունների դոկտոր,

Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,

պրոֆեսոր Ալեկսիյան Պարզն Մերգելի



ԿԱՐՄԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՄԱՐԳՍՑԱՆ ՆԵԼԼԻ ԷՂՈՒԱՐԻ

ՓՈՒՍԲԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ

ՀԱՅԵՑԱԿԵՐՊԸ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄ

Ժ.02.07- «Ռումանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Քննարկվող ատենախոսությունը նվիրված է փոխաբերությանը, որը հանդես է գալիս ոչ միայն որպես լեզվաբանական երևույթ, այլև որպես փիլիսոփայական, հոգեբանական և ճանաչողական ուսումնասիրության կարևոր ոլորտ: Փոխաբերությունը սովորաբար սահմանվում է որպես իմաստի փոխանցում, սակայն այն ունի խորքային հասկացության ընդլայնում: Հասկացության փոխաբերությունը գործում է որպես մտածողության մոդել, որը բացահայտում է մարդու մտածողության կառուցվածքը և ցույց տալիս, թե ինչպես է ձևավորվում ստեղծագործ ու պատկերավոր մտածողությունը: Այն ներառում է միջնորդ-հասկացությունների կիրառություն, ինչպես նաև փորձառության դրսևորումներ ընկալողական, շարժողական, մտավոր և զգացական: Այս գործընթացը պայմանավորում է փորձառությամբ ձեռք բերված գիտելիքի կառուցումն ու դասակարգումը: Վերջապես,

փոխաբերությունը հանդես է գալիս որպես փորձառության կանոնակարգման միջոց, որը միաժամանակ ձևավորում և ուղղորդում է ճանաչողական համակարգը:

Սույն աշխատանքում հեղինակն անդրադառնում է հասկացութային փոխաբերության տեսությանը, որը ձևակերպվել է Ջորջ Լակոֆի և Մարկ Ջոնսոնի կողմից: Այն ընդգծում է մարդու հասկացութային համակարգի փոխաբերական բնույթը և դրա միջոցով մտածողության ու արտաքին աշխարհի կապը: Փոխաբերությունների ուսումնասիրության մեջ կարևոր է դրանց տեքստաբանական բնութագրի քննությունը, հատկապես գեղարվեստական գրականության մեջ: Գրական տեքստի իմաստային վերլուծությունը ներառում է բառիմաստից մինչև ամբողջական տեքստի իմաստի ուսումնասիրություն՝ ընդգրկելով տեղեկատվական, խորհրդանշային և թաքնված մակարդակները:

Ատենախոսության հիմնական նպատակն է աղբյուր-տեքստում փոխաբերության էության և ստեղծման մեխանիզմների ուսումնասիրությամբ ձևակերպել մեթոդաբանական սկզբունքներ: Այդ սկզբունքները հնարավորություն են տալիս թիրախ-տեքստում հայտնաբերել համարժեք փոխաբերություն՝ ապահովելով իմաստային հավասարություն:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է փոխաբերության բազմաբարդ էությամբ, որը դարեր շարունակ եղել է տարբեր գիտությունների ուսումնասիրության առարկա, սակայն մինչ օրս էլ չի կորցրել իր կարևորությունը: Այն հատկապես հետաքրքրություն է ներկայացնում թարգմանաբանության ոլորտում՝ բնագրի անթարգմանելի համարվող լեզվական միավորների թիրախ լեզվում հնարավորինս ճշգրիտ փոխանցման խնդրի տեսանկյունից:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է փոխաբերության վերաբերյալ թարգմանաբանության մոտեցումների վերաիմաստավորման և դրա հիման վրա միջգիտակարգային տեսությունների լուծմանն ուղղված նոր մեթոդաբանական մոտեցման ձևավորման մեջ: Միաժամանակ նոր է նաև փոխաբերությունների ճանաչողական բնույթի համապարփակ ուսումնասիրությունը և դրանց համատեքստային իմաստի քննությունը՝ հերմենևտիկական ու լեզվաոճաբանական մեթոդների կիրառմամբ:

Ատենախոսության տեսական նշանակությունը կայանում է փոխաբերության բազմակողմանի ուսումնասիրության մեջ, որը միջգիտակարգային մոտեցմամբ

համադրում է լեզվաբանական, ճանաչողական և տեքստաբանական հիմնահարցերը: Մշակված ինտեգրացված մեթոդը նոր լուծումներ է առաջարկում փոխաբերությունների ստեղծման և թարգմանության խնդիրներում՝ ընդգծելով դրանց ճանաչողական բնույթը, համատեքստային իմաստը և գեղարվեստական տեքստի լիակատար փոխանցման կարևորությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ներածության մեջ հեղինակը կանգ է առնում թեմայի արդիականության, տեսական և գործնական նշանակության, նորարարության և հարակից մի շարք այլ հարցերի վրա՝ ուրվագծելով հետագա աշխատանքի հիմնական կառուցվածքն ու խնդիրները:

Առաջին գլխում՝ «Փոխաբերությունների առաջացման ճանաչողական-իմաստաբանական հիմքերը խոսքում», հեղինակը քննարկում է փոխաբերությունը՝ որպես լեզվաբանական երևույթ, որը ժամանակի ընթացքում դարձել է միջգիտակարգային ուսումնասիրության կարևոր առարկա՝ ընդգրկելով լեզվաբանությունը, փիլիսոփայությունը և ճանաչողական գիտությունները: Ընդգծվում է, որ փոխաբերության բացահայտման և մեկնաբանման մեթոդները առանցքային դեր ունեն ընկալման ու ըմբռնման գործընթացներում, հատկապես գեղարվեստական տեքստերի վերլուծության ժամանակ: Փոխաբերության ստեղծման ճանաչողական մեխանիզմների ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե ինչպես են դրանք նպաստում բարդ մտավոր գործընթացների իրականացմանը և արտահայտում անհատի յուրահատուկ լեզվամտածողությունը: Վերջում հասկացության փոխաբերության տեսությունը ներկայացվում է որպես համապարփակ մոտեցում, որը բացահայտում է փոխաբերության կառուցվածքային առանձնահատկությունները և գործաբանական նշանակությունը իրականության ընկալման մեջ:

Երկրորդ գլխում՝ «Գրական դիսկուրսի հասկացության փոխաբերական բաղադրիչը և թարգմանության տեսության մեջ կիրառելու դրա նպատակահարմարությունը», ատենախոսը քննարկում է գրական դիսկուրսի հասկացության փոխաբերական բաղադրիչը և դրա կիրառման նպատակահարմարությունը թարգմանության տեսության

մեջ: Առաջին մասում շեշտվում է, որ գրական տեքստի հերմենևտիկական, ճանաչողական և լեզվաոճաբանական մեկնաբանությունը կարևոր է թարգմանական գործընթացում՝ ապահովելով հեղինակային մտադրության ճշգրիտ փոխանցում և աղբյուր-տեքստի ոճական առանձնահատկությունների, մասնավորապես փոխաբերությունների, ճիշտ վերարտադրություն: Ներկայացվում է, որ փոխաբերության մեկնաբանությունը նպաստում է թիրախ-տեքստում գեղարվեստական արժեքի պահպանմանը: Երկրորդ մասում ուսումնասիրվում է փոխաբերության հասկացության համակարգը, որը գրական տեքստին հաղորդում է հուզական, պատկերավոր և գեղագիտական երանգավորում: Քննության են առնվում տարբեր տեսություններ, որոնք լուսաբանում են փոխաբերության թարգմանության խնդիրները: Վերջում ներկայացվում է ինտեգրված մեթոդաբանություն, որը հիմնավորում է ճանաչողական և հասկացության փոխաբերությունների արդյունավետ փոխանցումը աղբյուր-լեզվից թիրախ-լեզու՝ հանդես գալով որպես թարգմանական ռազմավարություն:

Երրորդ գլխում ատենախոսը ուսումնասիրում է փոխաբերության ճշգրիտ փոխանցման խնդիրը և դրա դերը թարգմանական գործընթացում: Քննության առարկա են դառնում դիպվածային և լայնորեն կիրառվող փոխաբերությունների ստեղծման ճանաչողական եղանակները, ինչպես նաև դրանց թարգմանական համարժեքների ապահովումը: Գլուխը շեշտում է հեղինակի մտադրության պահպանման և հարակից խնդիրների լուծման կարևորությունը՝ հիմնված Ջեք Լոնդոնի ստեղծագործությունների վրա:

Եզրակացության մեջ ամփոփվում են հետազոտության ընթացքում ստացված արդյունքները՝ ընդգծելով դրանց գիտական ու գործնական արժեքը:

Գրականության ցանկում ընդգրկված են 105 գիտական աղբյուրներ, որոնք արտացոլում են աշխատանքի տեսական հիմքը և ապահովում դրա բազմակողմանի ու հիմնավորված ուսումնասիրությունը:

Նեյի Սարգսյանի ատենախոսությունը անկասկած ունի ոչ միայն տեսական արժեք, այլ նաև գործնական և մշակութային նշանակություն: Հեղինակը փոխաբերությունը դիտարկում է, որպես լեզվամտածողության կարևոր բաղադրիչ, որը լայնորեն կիրառվում է գեղարվեստական գրականության մեջ: Տարբեր լեզուներում փոխաբերությունների ազգային-մշակութային առանձնահատկությունները հաճախ դժվարություններ են

ստեղծում համարժեք թարգմանության համար: Բացի այդ, հեղինակի կողմից ընտրված մեթոդաբանության կիրառումը յուրովի է լուծում փոխաբերությունների իմաստային փոխանցման խնդիրը: Ընդհանուր բնութագրմամբ Նելլի Սարգսյանի ատենախոսությունը արդիական և բովանդակալից աշխատանք է, որն առանձնանում է հետազոտողի նպատակաուղղվածությամբ և իրազեկությամբ: Աշխատանքում ընդգրկված է լայնածավալ փաստական նյութ, որը հեղինակին հնարավորություն է տալիս կատարել ծանրակշիռ ընդհանրացումներ:

Բարձր գնահատելով կատարված աշխատանքը՝ կցանկանայինք ստանալ որոշ հարցերի պարզաբանումներ:

Որքանով է փոխաբերությունների հայտնաբերման գործընթացի (ՓՀԳ) մեթոդը, համադրված ֆրեյմերի սահմանազատման և ֆիգուրա-հիմք-կենտրոնացման վերլուծական մոտեցումների հետ, ապահովում աղբյուր-տեքստում փոխաբերական իմաստների ճշգրիտ վերհանումն ու մեկնաբանումը:

2. Ի՞նչ գործոններով է պայմանավորվում փոխաբերության թարգմանության ինտեգրացված քառաքայլ մեթոդի արդյունավետությունը՝ հայտնաբերման, հասկացության վերլուծության, համարժեքների ընտրության և եզրագծման փուլերում, և ինչպե՞ս է այն բացահայտում թարգմանչի անհատական ռազմավարության ազդեցությունը թիրախ-տեքստի ձևավորման վրա:

Ինչպե՞ս է փոխաբերությունը որպես ճանաչողական մոդելավորման միջոց հաղորդում հերոսների աշխարհընկալումն ու գաղափարական փորձառությունը Ջ. Լոնդոնի վեպերի հայերեն թարգմանություններում, և որքանով է ինտեգրացված թարգմանական մեթոդը (ռազմական, անուղղակի և ստեղծագործական ռազմավարությունների համադրությամբ) ապահովում այդ փոխաբերությունների իմաստաբանական ճշգրտության, գործաբանական նպատակադրության և տեքստային ամբողջականության պահպանումը տարբեր թարգմանական լուծումների համատեքստում:

Վերը նշված հարցապնդումները ամենևին չեն նվազեցնում կատարված հետազոտության արժանիքները: Ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ

իրականացված է բավականին լուրջ, տեսական և գործնական նշանակություն ունեցող հետազոտություն: Ատենախոսությունը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջները և հեղինակն արժանի է իր հայցած քանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին: Մեղմագիրն իր կառուցվածքով և բովանդակությամբ համապատասխանում է ատենախոսությանը: Հեղինակի տպագիր հոդվածները արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Վերոնշյալը թույլ է տալիս միջնորդել ԵՊՀ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի առաջ Նեյի Էդուարդի Սարգսյանին քանասիրական գիտությունների թեկնածուի հայցվող աստիճանը Ժ.02.07 «Ռումանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ:

Գրախոսությունը քննարկվել և հաստատվել է Ռուս-Հայկական համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի 2026 թվականի մայիսի 15-ին կայացած N10 նիստում:

Ատենախոսության քննարկմանը ներկա էին Ռուս-Հայկական համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի հետևյալ անդամները՝ Բ.գ.դ., պրոֆեսոր Կ. Մատինյանը, Բ.գ.դ., պրոֆեսոր Ա. Միմոնյանը, Բ.գ.թ., դոցենտ Ս. Սարինյանը, դոցենտ Ն. Թովմասյանը, Բ.գ.թ., դոցենտ Ս. Թումանյանը և այլք:

Առաջատար կազմակերպություն՝
Ռուս-Հայկական համալսարանի
լեզվի տեսության և միջմշակութային
հաղորդակցության ամբիոնի վարիչ,
Բ.գ.դ., պրոֆեսոր՝



Հաստատում եմ
Գիտքարտուղար

Ա. Ա. Միմոնյան

Ռ. Ս. Կասաբաբովա